Դասղեկի կատարած աշխատանքների հաշվետվություն

2021-2022 ուստարի

2022թ. փետրվարի 19-ին 4-րդ ^{Ա} դասարանում կազմակերպեցինք միջոցառում գրքի նվիրման տոնին նվիրված: Դասարանում սովորող 29 աշակերտներ միմյանցից ստացան տարբեր հեղինակների գրքեր: Օրը գրքառատ էր,հետաքրքիր, տպավորություններով հարուստ: Ներկա գտվեցին երեք ծնող, նկարվեցինք, լսեցին և դիտեցին Հովի. Թումանյանի մասին կինոնկար, երգ-երաժշտություն, միմյանց շնորհավորեցին բարի մաղթանքներով,ուրախ ժպիտներով օրն ավարտվեց:

Շաբաթվա ամեն երեքշաբթի օրը տեղի է ունեցել դասղեկի ժամ: Քննարկվել են բազմաբովանդակ հարցեր՝ կարգապահական, ուսումնական և դաստիարակչական: Երեխաները սիրով մասնակցում էին քննարկումներին, լսում էին միմյանց, հայտնում էին կարծիքներ առաջադրված թեմաների, ինչպես նաև ծագած հարցերի շուրջ,իսկ վերջում կայացնում որոշում: Տևողությունը՝ 30-40 րոպե:

2022 ուստարում դասարանի աշակերտները՝ օրը 3 աշակերտ կատարել են հերթապահություն: Նրանք հետևել են իրենց ընկերների կարգապահությանը ոչ միայն դասամիջոցներին, այլև դասերի ժամանակ: Դասերի վերջում էլ կարգավորել են դասասենյակը / սեղան, աթոռ/ և նոր գնացել տուն:

2022թ փետրվարի 8-ին և 9-ին 1-4-րդ դասարաններում կազմակերպվել է գրավոր աշխատանքներ տնօրինության կողմից մաթեմատիկա և մայրենի առարկաներից:

Նշված ստուգարքին մասնակցել են 25 աշակերտ, բացակա՝ 2-ը:

Որակական առաջադիմությունը ունի հետևյալ պատկերը.

Մայրենի /25 աշ./	Մաթեմատիկա /25 աշ./
«9» -14	«9»-3
«8» -1	«8» -3
«7»-3	«7»-4
«6» -1	«6» -5
«5»-2	«5»-0
«4»-2	«4»-4
«3»-2	«3»-6
Որակականը՝ 70 %	Որակականը՝ 40 %
Միջին թվաբանականը՝ 7,3	Միջին թվաբանականը՝ 5,92

12.04.2022թ-ին կազմակերպվել է էքսկուրսիա՝ Կոմիտասի թանգարան ինստիտուտ,մանկական «Տիեզերք » սրճարան, ապա Հովի. Թումանյանի տիկնիկային թատրոն, դիտելու «Չոփչոփիկը » ներկայացումը: Երեխաները բարձր տրամադրությամբ,անմոռանալի հուշերով վերադարձան տուն:

18.04.2022թ դպրոցի ճաշարանում կազմակերպեցինք Քրիստոսի հարության՝ Սուրբ Զատիկ տոնը:

22.04. 2022թ. կայացավ բաց-դաս «Ես և շրջակա աշխարհը» առարկայից «Ճանապարհորդություններ և հայտնագործություններ» թեմայով:

Թեման նախագծային էր,երկարատև ժամկետով՝ 2 ամիս տևողությամբ:Մասնակցում էր ողջ դասարանը իրենց փնտրած լրացուցիչ և հետաքրքիր տեղեկություններով, անհրաժեշտ դիդակտիկ նյութերով՝ քարտեզ, գլոբուս,պաստառներ տարբեր աշխարհամասերի վերաբերյալ, դրոշներ և այլն:Դասը ուներ ուսուցողական և ճանաչողական նպատակ,որը միտված էր աշակերտների հետաքրքրությունը բավարարելուն:

01.06.2022թ. համադպրոցական միջոցառում նվիրված երեխաների պաշտպանության միջազգային օրվան:

09.06.2022թ.«Հրաժեշտ կրտսեր դպրոցին» թեմայով նախագծային միջոցառում, որի հանդիսատեսն էին ծնողները, ուսուցիչները, տնօրինությունը և այլ հյուրեր:

4-րդ Ա դասարանում սովորող 28 աշակերտները մասնակցեցին մայրենի և մաթեմատիկա առարկաներից գիտելիքների ստուգմանը,որն ունի հետևյալ առաջադիմությունը:

Մայրենի՝ 10.06.2022թ.

«10» - 0

«9» -12

«8» -7

«7»-5

«6» -2

«5»-1

«4»-1

Որակականը՝ 85 %

Միջին թվաբանականը՝ 7,9

Մաթեմատիկա՝13.06.2022թ.

«10» - 3

«9»-8

«8»-3

«7» -7

«6» -5

«5» -2

Որակականը՝ 75 %

Միջին թվաբանականը՝ 7,7

2021-2022 ուստարում դասարանում սովորել է 29 աշակերտ, տարվա վերջում՝ 28 աշակերտ:

Տղա -17

Աղջիկ – 11

Գերազանց - 10 /5տղա, 5 աղջիկ /

Հարվածային 11 / 6տղա, 5 աղջիկ/

Որակական առաջադիմությունը՝ 75 %

Ընդհանուր առաջադիմությունը՝ 100 %

Չգնահատված չկա

ԿԱՊԿՈՒ սովորող՝ 1 աշակերտ/ տղա/; Նրա համար կազմվել է գիտելիքների ստուգման նմուշօրինակին համապատասխան պարզեցված թեստ:

Դասվար՝ / Ա. Ա. Մնացականյան